

ԱԼԻԲՍԱՆ ՎՐԳ. ՈՒՆՃԵԱՆ, Պոլսեցի, Մբ.— Պաշտօնեայ Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին (1869):

ԱԼԻԲՍԱՆ (ՏԻՐՍՅՈՒ). — Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբ 1692ին, ՓԿԵ, հաւանաբար յաջորդ Մինաս Վրգ. Ամբեցւոյ: Յովհաննէս ՊԵ., 1692ին, Զատիկ ձրագալոյցի հրովարտակ ները նորոգել տալու համար, դանոնք կը ղրկէ Կ. Պոլիս ՓԿԵ. տիրացու Ալիքսանին (ԺՊԵ. Ա. էջ 412):

ԱՀԱՐՈՆ (ՄՀՏ). — 1667ին ՄՁ.ի կը նուիրէ Զեռ. Շարակնոց մը (Թ. 1140) ըստ հետեւեալ յիշատակարանի. «Յիշատակ է սբ. մատենա սր կոչի Շարակնոց ի սբ. յեմ. ի դուռն սբ. Յակոբայ, մահաեսի Ահարոնին հոգոյն կողակցին մահաեսի Սաթ մէլիքին, եւ որդւոյն Ներսէսին, եւ զստերն Թուրվանտին եւ թոռանն Կարապետին, ի թվականիս մերոյ, հազար հարիւր եւ տասն եւ վեց (=1667). . .» (Մսայ. Յուց. տետր ԺԸ. էջ 1405):

ԱՀԱՐՈՆ ՎՐԳ, Մբ.—Երուսաղեմի Ամբեցի Մինաս Պտք.ի Պոլիս երթալուն առթիւ ուղեկից կ'ըլլայ անոր. կ'երթայ Եգիպտոս եւ անկից ու կը վերադառնայ Երուսաղէմ 1699ին (ԱՄԴԵՅԻ):

ԱՀԱՐՈՆ ՎՐԳ.—Ծ. 1825. Զռ. 1853. վեղար կ'ստանայ Լիմ անապատի մէջ 1866ին. վանահայր Կարնոյ վանքին: Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ 1876 ին. կը վախճանի ի Ֆրէզնօ (1910):

ԱՀԱՐՈՆ ՎՐԳ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ՎԱՆՅԻ, Մբ.— Զռ. (1884). Հիւրընկալ:

ԱՀԱՐՈՆ ՎՐԳ. ԶՈՒՂԱՅԵՅԻ, Մբ.— Նւ. Ասպահանի, Շրգթայակրի օրէն սկսեալ: Նախան Յակոբ Պտք. անոր մասին (ՄՁ. Թ. 532) իր նամակներուն մէջ լաւ վկայութիւն կուտայ զրելով տեղւոյն ազգայնոց «...յարգանօք ընդունելով զԱհարոն Աստուածարտն Վրգ. եղբայր մեր. որ դանձն նուիրեալ է կենօքն հանդերձ ի ծառայութիւն սրբոյ աթոռոյս»:

Այս Ահարոն վրգ. Զուղա գտնուած ժամանակ, իր հակողութեամբ, 1745ին, Սպահանի մէջ, Աւետիս ք.ի ընդօրինակել կուտայ Ասեկի ժառանգի մը Զուղայեցի Պարոն Աստուածատուր Խարտալեանցի համար. վերջինս՝ նոյն Զեռագիրը (ՄՁ. Թ. 2244) Ահարոն վրգ.ի միջոցաւ կը ղրկէ Երուսաղէմ Ս. Յա-